Համազասպ ԳԱԼՍՏՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու

1989 թ. ավարտել է ԵրԺՏԻ (այժմ՝ ՀՊՏՀ) պլանատնտեսագիտական ֆակուլտետը: Սկսած 1993 թ., շուրջ 25 տարի աշխատել է ՀՀ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում: 2004 թ. ստացել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: 2004 թվականից դասավանդում է ՀՀ պետական կառավարման ակադեմիայում, Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայում և Տուրիզմի հայկական ինստիտուտում: 2019 թվականից ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի հետազոտող է:

Երկու տասնյակից ավել գիտական, վերլուծական հոդվածների և 2 մենագրության հեղինակ է:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅՈՒՆ. Ո՞Վ ՊԵՏՔ Է ԹԵԼԱԴՐԻ «ԽԱՂԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ»

DOI: 10.52174/2579-2989_2021_4_22

Կարևոր չէ՝ որքան դանդաղորեն ես առաջ ընթանում: Կարևորն այն է, որ կանգ չառնես:

Կոնֆուցիոս

Հիմնաբառեր. *սոցիալական ձեռնարկատիրություն, սոցիալական ձեռնարկատեր, շահագրգիռ խմբեր, խոցելի խմբեր, բնապահպանություն, նորարարություն*

Որևէ պետության կառավարություն ի վիճակի չէ ինքնուրույնաբար լուծելու տվյալ ժամանակահատվածում երկրում առկա բոլոր սոցիալական խնդիրները, և հետևապես՝ այդ խնդիրներից որոշների լուծումները, կամա թե ակամա, վերապահվում են գործարարներին: Պետության դերն այդ պարագայում առավել քան պարզ է. խթանել ձեռնարկատիրության այն ձևերը, որոնցում սոցիալական բաղադրիչը ոչ թե հետևանք է, այլ պատճառ: Հաջողակ գործարարների մեծ մասը, որպես կանոն, իր աշխատանքային կենսագրությունը սկսել է՝ բախվելով մի շարք սոցիալական հիմնահարցերի, և կարողացել է սեփական ուժերով լուծում տալ դրանց, ինչն էլ հետագայում շարժառիթ է դարձել, բացի շահութաբեր լինելուց, ծավալել նաև տնտեսական գործունեություն՝ ի նպաստ խոցելի կամ ռիսկային խմբերի, կարիքավոր կամ աղքատության շեմում գտնվողների, որոնք ցանկություն ունեն աշխատելու և արարելու: Այսպիսի մարդակենտրոն և ներառականության կարևոր սկզբունքների կիրառմամբ նախաձեռնությունները տրամաբանորեն շաղկապվում են նաև բնապահպանական խնդիրների հետ: Հոդվածը սոցիալական ձեռնարկությունների էության, հիմնահարցերի և զարգացման միտումների մասին է: Մասնավորապես՝ փորձ է արվել դիտարկելու Հայաստանում այն շահագրգիռ խմբերի շրջանակը, որը կարող է նախանշել և, ինչու ոչ, նաև թելադրել տվյալ ուղղության զարգացման «խաղի կանոնները»:

Սոցիալական ձեռնարկատիրության էությունը, սահմանումը և ձևակերպումների հստակեցման անհրաժեշտությունը

Սոցիալական ձեռնարկատիրությունը (social entrepreneurship), որպես սոցիալ-տնտեսական և կազմակերպական ֆենոմեն, վերջին տարիներին ավելի ու ավելի հաճախ է իր վրա կենտրոնացնում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, քաղաքական, գիտական, գործարար ոլորտների ներկայացուցիչների ուշադրությունը: Ձեռնարկատիրության այս ձևը կարելի է համարել ներկա իրողություններում մի քանի ուղղությունների (սոցիալական, տնտեսական, բնապահպանական, ներառական)՝ նույն նպատակի իրականացման համար միաժամանակ համախմբվելու յուրօրինակ մոդել, որի կիրառումը վերոթվարկյալ ուղղություններում խնդիրների լուծման ուղիներ է առաջադրում, և պետք է արձանագրել, որ նման մոտեցմամբ հաճախ ուղղակի «խփում» է ճիշտ նշանակետին՝ միաժամանակ լուծելով բարդ ու փոխշաղկապված հիմնահարցերի մի ամբողջական «փունջ»:

Ի տարբերություն դասական ձեռնարկատիրության, որի հիմնական նպատակը տնտեսական արժեքի և շահույթի ստեղծումն է, սոցիալական ձեռնարկատիրության գործունեության հիմքում հասարակության սոցիալական, ինչպես նաև բնապահպանական սուր խնդիրներն են: Ձեռնարկատիրական այս ուղղությունը տնտեսության զարգացման տարբեր փուլերում ունեցել է տարբեր դրսևորումներ, և հետևաբար՝ ընդհանուր տնտեսական միջավայրում դրա ազդեցության դրսևորումները նույնպես զանազանվել են: Աշխուժանալով նախորդ դարի 80-ական թվականներին՝ այս ուղղությունը համաշխարհային քաղաքական ու տնտեսագիտական մտքի համար նորովի և յուրովի ընկալվեց XXI դարի սկզբին (2006 թ.), երբ «Grameen Bank» միկրովարկային ֆինանսական կազմակերպության հիմնադիր և սոցիալական ձեռնարկատեր Մուհամադ Յունուսն արժանացավ Խաղաղության նոբելյան մրցանակի[1]: Դարակազմիկ այս իրադարձությունից հետո տնտեսական, բնապահպանական, ինչպես նաև քաղաքական շրջանակներում սոցիալական ձեռնարկատիրությունը սկսեց դիտարկվել ոչ միայն որպես սոցիալական խնդիրների արդյունավետ և նպատակային լուծման միջոց, այլև իբրև կենսունակ տիրույթ՝ ինստիտուցիոնալ առումով: Այն դարձավ մտածելակերպի փոփոխության և սոցիալ-տնտեսական փոխակերպումների յուրօրինակ պայթուցիչ (դետոնատոր): Միաժամանակ, սոցիալական ձեռնարկությունների կառավարիչները, որպես «կանաչ» գործարարության[2] ակտիվ քարոզիչներ, իրենց գործունեության հիմքում դրեցին բնության պահպանությունն ու մարդու ֆիզիկական առողջությունը:

«Սոցիալական ձեռնարկատիրություն» եզրույթի սահմանումները և դրանցից բխող մեկնաբանությունները տարբեր են: Այդպիսին է յուրաքանչյուր նոր երևույթի «ճակատագիրը», և պարզ է, որ առավել հստակ ձևակերպումների ու սահմանումների համար անհրաժեշտ է որոշակի ժամանակահատված: Օրինակ՝ Եվրամիության փաստաթղթերում սոցիալական ձեռնարկությունը բնութագրվում է որպես «սոցիալական տնտեսության գործող անձ, որի հիմնական նպատակն է ունենալ սոցիալական ազդեցություն, այլ ոչ թե իր հիմնադիրների կամ բաժնետերերի համար ապահովել շահույթ»[3]: Հարվարդի նորարարական լաբորատորիան սոցիալական ձեռնարկուտիրությունը ներկայացնում է որպես «կարծրատիպերը կոտրող սոցիալական փոփոխություն՝ անկախ տվյալ պահին տնօրինվող ռեսուրսներից»[4]: Այստեղից բխում է նման գործունեությամբ զբաղվող ձեռնարկատիրոջ սահմանումը, որն առավել ընդգրկուն կերպով է ձևակերպել ամերիկացի գիտնական, Դյուկի համալսարանի (ԱՄՆ) «Սոցիալական ձեռնակատիրության զարգացման կենտրոնի» (CASE) հիմնադիր և տնօրեն Գրեգորի Դիսը[5]:

[1] https://armenia.savethechildren.net/sites/armenia.savethechildren.net/files/library/Arm%20final%20print.pdf
[2] Գործարարության ձև, որտեղ գերակա է համարվում բնապահպանական մոտեցումը:
[3] https://ec.europa.eu/growth/sectors/social-economy/enterprises_en
[4] https://innovationlabs.harvard.edu/focus/social-enterprise/
[5] https://entrepreneurship.duke.edu/news-item/the-meaning-of-social-entrepreneurship/

Նա այդպիսի գործարարներին անվանել է «փոփոխության գործակալներ», որոնք, բացի մասնավոր տնտեսական արժեք ստեղծելուց՝

- ունեն սոցիալական արժեք ստեղծելու և պահպանելու առաքելություն,
- այդ առաքելությանը ծառայեցնելու նպատակով փնտրում և գտնում են նոր հնարավորություններ,
- մասնակցում են շարունակական նորարարության, գործնական դաշտում դրա ներդաշնակեցման և ուսուցման գործընթացներին,
- չնայած առկա ռիսկերին և տվյալ պահի ռեսուրսների սղությանը, այդուհանդերձ, գործում են համարձակ ու նպատակասլաց,
- ցուցաբերում են հաշվետվողականության թափանցիկություն իրենց շահառուների և ստեղծած արդյունքների համար:

Վերոթվարկյալից զատ, մի շարք աշխատություններում, ըստ ժամանակագրական փոփոխությունների և զարգացման արագության ու նորարարական խիզախումների, առկա են նաև այլ մեկնաբանումներ, սակայն արձանագրենք, որ «սոցիալական ձեռնարկատիրություն» եզրույթը շարունակում է մնալ տեսաբանների վեճերի և հետաքրքրությունների տիրույթում: Ուստի, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ձևակերպումները դեռևս հստակ ու վերջնական չեն, կարող են լինել ինչպես «խաղի կանոնները» թելադրողների փոխատեղումներ, այնպես էլ տարբեր ուղղվածության մոտեցումներ ու գործողություններ, որոնք ձեռնարկատիրության այս ձևի զարգացման համար կարող են ունենալ ինչպես դրական, այնպես էլ բացասական ազդեցություն:

Դրականն ակներև է. զարգանում է ձեռնարկատիրության մի ձև, որը թույլ է տալիս առավել մարդակենտրոն դարձնել աշխատանքի կազմակերպումն ու մարդու տնտեսական գործունեության ազդեցությունը բնության վրա: Բացասականն առավելապես վերաբերում է հռչակված նպատակին և դրա իրականացման միջնատարածքին, երբ շահույթ ստանալու՝ չհայտարարված, բայց նախապես ծրագրավորված մղումները հաճախ շղարշվում են սոցիալական ու բնապահպանական «գունեղ փաթեթավորմամբ», ինչն էլ ինքնին դժվարացնում է գործընթացի արդյունավետ վերհսկողությունը և հետևաբար՝ հնարավորություն ստեղծում ի սկզբանե դրված բարի նպատակի քողի ներքո կառուցելու շահութաբերության «անտեսանելի բուրգեր»:

Այդուհանդերձ, անկախ եզրաբանական վերջնական հստակեցումներից, սոցիալական ձեռնարկատիրությունը՝ հավաքական հասկացության և գործոնային ներազդման առումով, համեմատաբար «երիտասարդ» լինելով ձեռնարկատիրական դասական ուղղությունից, համարվում է սոցիալական փոփոխությունների և տնտեսության մեջ ներառականության սկզբունքի ապահովման կարևոր հենք ու սկզբնաղբյուր և էվոլյուցիոն զարգացման ճանապահով ի զորու է դառնալու «մաքուր գետ», որը որակական լուրջ փոխակերպումներ կարող է իրականացնել համաշխարհային «տնտեսական օվկիանոսում»՝ մարդակենտրոն ու բնապահպանական գործելաոճի դրական լիցքեր հաղորդելով դրան:

Սոցիալական ձեռնարկատիրոջ կերպարը

Սոցիալական ուղղվածության ձեռնարկատիրության նախաձեռնողն այդ մարդակենտրոն գաղափարի կրողն է, հետևապես, բոլոր առումներով, չափազանց կարևորվում է նման հանձնառություն ու պատասխանատվություն ստանձնողի մարդկային կերպարը: Ո՞վ է նա, ի՞նչ է ցանկանում, ո՞րն է նրա շահը: Արդյո՞ք սոցիալական ձեռնակատիրոջ բնութագիրն էականորեն ու սկզբունքորեն տարբերվում է սովորական կամ, ավելի ճիշտ, դասական ձեռնարկատիրոջ բնութագրից ու կերպարից: Սրանք հարցեր են, որոնք հետաքրքրում են ոչ միայն հանրությանն ու շահառուներին, այլև ձեռնարկատիրական՝ համեմատաբար «երիտասարդ» այս ուղղության հետազոտողներին, վերլուծաբաններին ու ակադեմիական շրջանակներին: Անկախ ամեն ինչից, այդ թվում՝ պետության կողմից ստեղծվող պայմաններից, ակնառու է, որ նման գործունեության հիմքում, նախևառաջ, մարդկային գործոնն է:

Եթե անձն իրագործում է մի գաղա-

փար, որի արդյունքում, անկախ ռիսկայնության աստիճանից, կարողանում է նորարարական մոտեցումներով, բնապահպանական բաղադրիչի պահպանմամբ, սոցիալական որոշակի խնդիրներ ունեցող մարդկանց միավորմամբ վերակազմակերպել արդեն իսկ գործող կազմակերպությունը կամ հիմնադրել նորը, ապա նա ստեղծում է արժեք, ավելացնում տվյալ համակարգի (համայնք, երկիր) սոցիալական հարստության մասնաբաժինը, լուծում մինչ այդ չլուծված սոցիալական կարևորության խնդիրներ և այլն: Հետևաբար՝ կարող ենք ասել, որ այդ անձը լիիրավ կերպով «տեղավորվում է» սոցիալական ձեռնարկատիրոջը վերաբերող սահմանման մեջ: Սոցիալական պատասխանատվությամբ օժտված մարդիկ, լինելով փոփոխությունների ջատագով, անգամ սուղ ռեսուրսների առկայության պայմաններում ցանկանում են իրենց ստեղծագործական որակներն ու գիտելիքները ներդնել սոցիալական արժեքի (բարիքի) ստեղծման գործում: Եվ հենց այս սկզբունքային գաղափարական հարթությունում է դասական և սոցիալական ձեռնարկատերերի հիմնական տարբերությունը, և այդ առումով, նրանք իրենց գործողություններում ավելի ակտիվ են ու տեսանելի կառավարման համակարգում, համայնքում, երկրում և աշխարհում: Նրանց գործողություններում զգալի է ալտրուիստական (անշահախնդիր գործելու) բաղադրիչը, և, իհարկե, մեծ է ցանկությունը սոցիալական արդարությանը նպաստող քայլերով փոփոխելու հասարակության ոչ միայն բարոյահոգեբանական, այլև աշխատանքի ու կենցաղի մասին ունեցած պատկերացումները:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ խնդրի հետազոտմամբ զբաղվող մասնագետները սոցիալական ձեռնարկատերերին դասակարգել են ըստ իրենց գործունեության ուղղվածության[6], մասնավորապես՝

1. սոցիալական կողմնորոշում ունեցողներ. ձեռնարկատերեր, որոնք մասնակցում են ոչ մեծ միջոցառումների՝ միտված առավելապես որևէ որոշակի համայնքի կամ հասարակության համար սոցիալական բարիքի ստեղծմանը,
2. սոցիալական կառուցողականության կրողներ. ձեռնարկատերեր, որոնք ցանկանում են ներդնել նորարարական գաղափարներ և իրականացնել բարեփոխումներ,
3. սոցիալական ինժեներներ. ձեռնարկատերեր, որոնք համակարգային և հեղափոխական փոփոխությունների կողմնակից ու ջատագով են:

Միաժամանակ, այս մարդիկ ունեն մեկ կարևոր ընդհանրություն. նրանք որոշակի գաղափարների կրողներ են՝ անշահախնդրության բավարար չափաբաժնով և պատասխանատվության բարձր զգացումով: Քանի որ նման արժանիքներով օժտված են ոչ բոլորը, ուստի շատերը նրանց «արարքներում» փորձում են գտնել ներքին ու անտեսանելի այլ շարժառիթներ, հանգելով այն մտքին, որ դրանց հիմքում բարեգործության գաղափարն է: Այնինչ հենց այստեղ էլ տեսանելի է դառնում ընդդիմախոսների նման հիմնավորման սնանկությունը, քանի որ սոցիալական ձեռնարկատերն ի սկզբանե աշխատում է ըստ «ձուկ բռնելու կարթի, այլ ոչ թե ձուկ տրամադրելու» սկզբունքի և հետևաբար՝ ցանկանում է իր կողքին տեսնել ոչ թե պարզապես բարիք ստացողի, այլ ստեղծողի՝ դա համարելով իր առաքելությունը: Իրականությունը տվյալ գործը նախաձեռնողի աշխարհընկալման, դաստիարակության ու ձևավորած արժեքային համակարգի տիրույթում է, և շարժառիթներն էլ բխում են հենց այդ ակունքներից: Նման գործունեություն ծավալող մարդը ցանկանում է գործել հանուն հասարակության բարեկեցության ու երջանկության, ինչպես նաև բավարարել սեփական հետաքրքրություններն ու աշխատանքի կազմակերպման նախասիրությունները նոր նախագծերի իրականացմամբ, նորարարական տեխնոլոգիաների կիրառմամբ:

Իհարկե, վերոնշյալ գործունեության վերջնարդյունքը, ի վերջո, կարող է նաև եկամտաբեր լինել, սակայն հիմնական մղումը, նախևառաջ, ուղղված է ոչ թե սեփական գոյին, այլ հասարակությանն ու

[6] Жохова В., Социальное предпринимательство: концепция, сущность и значение. Современная конкуренция / 2015. Том 9. № 4 (52).

մարդուն ընդհանրապես: Սա է դասական և սոցիալական ձեռնարկատիրությամբ զբաղվողների սկզբունքային տարբերությունը, և, անշուշտ, նման սկզբունքներով ապրող ու գործող մարդկանց գաղափարների ընկալումը դեռևս որոշակի ժամանակ է պահանջելու ոչ միայն հասարակության տարբեր շերտերից, այլև երկրի օրենսդիր ու գործադիր մարմիններից: Այս ոլորտը սոցիալական արդարության խորքային խնդիրների շղթայի մի մասնիկն է, և որքան շուտ վերջինս ձերբազատվի ավելորդ կաղապարներից, այնքան ավելի արագ կերպով կառողջանա հասարակությունը:

Շահագրգիռ խմբերը

Յուրաքանչյուր հասարակություն զերծ չէ սոցիալական խնդիրներից՝ հատկապես «խոցելի խմբերի»[7] ներառականության առումով, որոնց լուծումն օբյեկտիվորեն չի կարող դրված լինել միայն պետության ուսերին: Նույն սկզբունքն է գործում նաև բնապահպանության ոլորտում: Չթերագնահատելով հասարակական կազմակերպությունների տեղն ու դերը, այդուհանդերձ, պետք է արձանագրել, որ վերջիններս, միջազգային տարբեր կառույցներից ստանալով դրամաշնորհներ, հիմնականում գործունեություն են ծավալում գլոբալ հիմնախնդիրների լուծման համատեքստում, որոնք, որպես կանոն, այնքան էլ ներդաշնակեցված չեն լինում ազգային տնտեսության յուրահատկություններին, ինչպես նաև տվյալ երկրի քաղաքացիների հոգեկերտվածքային ընկալումներին ու կենցաղին: Արդյունքում, կատարվում է աշխատանք, ծախսվում են թեկուզ ոչ վերադարձելի, սակայն բավականաչափ պատկառելի ֆինանսական միջոցներ, իսկ ընդհանուր խորապատկերում փոխվում է միայն ինչ-որ մակերեսային բաղադրիչի կշիռ: Հետևաբար՝ պետությունը, որպես խոցելի խմբերի սոցիալական շահերի սահմանադրական պաշտպան, պարտավոր է որոշակի պայմաններ ստեղծել թե՛ սկսնակ ձեռներեցների, թե՛ արդեն իսկ հաջողակ գործարարների համար, որոնք, բացի նյութական շահ հետապնդելուց, կողմնորոշված են դեպի սոցիալական ու բնապահպանական ծրագրերի իրականացումը՝ այդ նպատակին ծառայեցնելով սեփական ռեսուրսները: Պետությունը պարտավոր է նման գործունեություն ծավալող մարդկանց ու կազմակերպությունների համար ստեղծել իրավական, տնտեսական և բարոյահոգեբանական պարարտ միջավայր:

«Սոցիալական ձեռնարկատիրություն» եզրույթի սոցիալական բաղկացուցիչն արդեն իսկ հանգեցնում է այն մտքին, որ խընդիրների այս համախմբի արդյունավետ լուծման հիմնական պայմաններից մեկն այնպիսի միջավայրի ստեղծումն է, որտեղ իր երկիրը կամ հայրենիքը սիրող յուրաքանչյուր ողջամիտ քաղաքացի հարգանքով և առավելագույն ակնածանքով կվերաբերվի նման շարժառիթով ձեռնարկատիրությամբ զբաղվողներին՝ հնարավորության սահմաններում նրանց սատարելով ինչպես բարոյապես, այնպես էլ ֆիզի-

ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

Շահագրգիռ խմբերի շրջանակը

կապես ու ֆինանսապես:

Ելնելով վերը նկարագրվածից՝ փորձենք ձևավորել շահագրգիռ այն խմբերի շրջանակը (գծապատկեր 1), որն ուղղակի կամ անուղակի կերպով կարող է նպաստել այդպիսի միջավայրի ստեղծմանն ու կայացմանը: Ինքնին հասկանալի է, որ խմբերից յուրաքանչյուրն առաջնորդվում է իր գերակա շահով, հետևաբար՝ պետք է գըտնել համադրման կետեր կամ եզրագծեր, որտեղ համընկնումները կարող են հանգեցնել ակտիվ ու փոխշահավետ համագործակցության: Խմբերից յուրաքանչյուրում, ձևավորելով կենսագործունեության բարենպաստ մթնոլորտ, կարելի է առանձնացնել այն անհատներին, որոնք վայելում են հեղինակություն և օժտված են սոցիալական պատասխանատվության բարձր գիտակցությամբ, գաղափարի շուրջ կողմնակիցներ հավաքելու, նորարարության նկատմամբ հետաքրքրություն ու հարգանք ցուցաբերելու ունակությամբ ու հմտությամբ, նվիրվածությամբ, արժեքային ուրույն համակարգով, նախաձեռնողականությամբ: Արդյունքում, ամեն մի խմբում կարող են ստեղծվել միկրոխմբեր, որոնք կիրականացնեն գաղափարներ՝ հօգուտ մարդու ու բնության, ի նպաստ արդարության ու բարօրության հաղթանակի: Հետևապես՝ կարելի է նաև ուրվագծել նրանց կերպարները, որոնք մշակելու և ապա թելադրելու են «խաղի կանոններ»: Միջավայրի ստեղծումը պետք է ձևավորվի այս ճանապարհով, և «նոր հեծանիվ» հորինելու անհրաժեշտություն չկա: Հարկ է հետևել ձեռնարկատիրության այս ձևի զարգացման համաշխարհային միտումներին՝ ոչ թե կրկնօրինակելով, այլ քաղելով այն օգտակարն ու արդյունավետը, որը հարիր է մեր հոգեկերտվածքին:

Աշխարհը և հայաստանյան իրականությունը

Վերջին տասնամյակում Երկիր մոլորակի տարբեր մայրցամաքներում սոցիալական ձեռնարկատիրության զարգացման միտումները ցույց են տալիս, որ նման սկզբունքներ և առաքելություն որդեգրած կազմակերպությունների ու դրանց առաջնորդների աշխարհագրությունն ընդլայնվում է՝ ինչպես պետությունների, այնպես էլ ոլորտների առումով:

Ձեռնարկատիրության այս ձևը զարմանալի ճկունությամբ ներդաշնակեցնում է նոր միտքը, նորարարությունը, մարդուն և բնությունը: Խոսքն այստեղ այն մարդու մասին է, որն օբյեկտիվ և սուբյեկտիվ տարբեր պատճառներով չի կարողացել ինքնուրույնաբար հարթել ստեղծագործ ու կայուն աշխատանքով ապրելու իր ճանապարհը:

Աշխարհում սոցիալական ձեռներեցների և ձեռնարկությունների ամենազարգացած համակարգն ԱՄՆ-ում է, որտեղ գոյություն չունի որոշակի օրենք սոցիալական ձեռնարկությունների վերաբերյալ, սակայն առկա է ամենակարևորը՝ հասարակության ու պետական ինստիտուտների ակտիվ աջակցությունը: Եվ պատահական չէ, որ երկրի չափահաս բնակչության 4,15%-ը սոցիալական ձեռներեց է[8]:

Եվրոպան նույնպես հաղթահարել է այն փուլը, երբ սոցիալական ձեռներեցները կառավարություններին և հասարակությանը ապացուցում էին իրենց գործունեության կարևորությունը: Եվրոպացիների մեծ մասը հասկանում է՝ ովքեր են սոցիալական ձեռներեցները, ինչու և ինչպես են նրանք աշխատում: Եվ հետևաբար՝ վերջիններս ժամանակակից եվրոպական տընտեսական «լանդշաֆտի» բնական մասն են կազմում: Գրեթե բոլոր եվրոպական երկրներում սոցիալական ձեռնարկատիրությունն ունի պաշտոնական կարգավիճակ, այդ կարգավիճակը հաստատող հըստակեցված ընթացակարգեր, օրինական կազմակերպաիրավական ձևեր ու սոցիալական ձեռնարկությունների գրանցամատյաններ, որոնք թույլ են տալիս նրանց մասնակցել իրենց երկրի տնտեսական կյանքին, ստանալ աջակցության համապատասխան միջոցներ և ֆինանսավորում: Եվ քանի որ ամեն ինչ թափանցիկ է ու պարզ, սոցիալական ձեռնարկատիրությունը գրավիչ է դառնում նաև ֆինանսական ինստիտուտների ու, հատկապես, բանկային համակարգի համար, որոնք, հաշվարկելով ռիսկերը, սկսել են տրամադրել տարբեր

[6] https://entreprenorskapsforum.se/wp-content/uploads/2019/03/

ձևաչափի վարկեր: Այսինքն՝ սոցիալական ձեռներեցներին ու կազմակերպություններին արդեն հասանելի ու մատչելի է այն նույն ֆինանսական գործիքակազմը, ինչ, ըստ էության, սովորական ձեռնարկատերերին:

Ինչպիսի՞ն է սոցիալական ձեռնարկատիրության կարգավիճակը Հայաստանում: Որքանո՞վ է հասարակությունը տեղյակ համաշխարհային գործընթացներից և պատրաստ աջակցելու նման նախաձեռնություններով հայտ ներկայացնող անհատներին կամ կազմակերպություններին: Ներկա իրավիճակի վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ մեր պատկերացումներում գործունեության այս տեսակն ավելի շատ համադրվում է պարզ ներառականության խնդրի հետ: Ցավոք, խորքային պատկերացումները բացակայում են անգամ մեդիատիրույթում, իսկ պետական ծրագրերում այդ մասին կա՛մ շատ քիչ է խոսվում, կա՛մ առհասարակ առկա չէ զարգացման տեսլական: Ֆիզիկական սահմանափակումներով մարդկանց խմբերի ընկալումը պահպանում է խորհրդային հետքը, երբ ամբողջ ԽՍՀՄ տարածքում, ներառյալ մեր հանրապետությունը, գործում էին որոշակի միավորումներ (կույրերի, խուլ-համրերի և այլն), որոնք իրենց արտադրական կառույցներում պարփակում էին հաղորդակցման հատուկ վարքագիծ ունեցող մարդկանց՝ այդպիսով զրկելով վերջիններիս ընդհանուր միջավայրին միասնանալու հնարավորությունից: Հաղորդակցման բարդություններ ուներ, օրինակ, հենաշարժողական խընդիրներով մարդկանց խումբը, քանի որ որևէ քաղաք կամ գյուղ ապահովված չէր անվտանգ շարժ կազմակերպելու տարրական գործիքակազմով: Դրությունն ինչոր չափով, սակայն ոչ ամբողջությամբ շտկվել է վերջին տարիներին, քանի որ ժամանակն առաջ է գնում, և, դրան զուգահեռ, ավելանում են մարդու՝ արտաքին աշխարհի հետ շփման ու տարաբնույթ գործընթացներում մասնակցայնության տարրական պահանջներն ու ցանկությունները:

Այս ամենով հանդերձ, ձեռնարկատիրության այս ձևն այսօր մեր իրականության թեկուզ թույլ, սակայն գործող մասնիկն է: Զարգացման ճանապարհը մեկն է: Նախ՝ ամրապնդել սոցիալական ձեռներեցության կարևորության գիտակցումն ինչպես պետական, այնպես էլ ֆինանսական ու մասնավոր հատվածի, ընդհանրապես՝ հասարակության ընկալումներում: Սա ենթադրում է տեղեկատվական ամեն մի հարթակում նպատակաուղղված աշխատանք, միջազգային լավագույն փորձի, հաջողված պատմությունների ներկայացում և ուսուցանում: Այս ամենը հնարավոր չէ իրականացնել կառավարության մեկ որոշմամբ կամ որևէ օրենքով: Դրա համար պահանջվում է հասարակության լայն զանգվածների համախմբում, որտեղ յուրաքանչյուր կատարող և մասնակից կունենա իր դերն ու առաքելությունը: Նույնը վերաբերում է շահագրգիռ խմբերի ամբողջ համակարգին: Այսօր, սակայն, այս առումով առկա չէ որևէ պետական կառույցի մշակած՝ թեկուզ մի քանի տարվա կտրվածքով զարգացման ճանապարհային քարտեզ: Խնդրի առնչությամբ ուսումնասիրություն կամ վերլուծություն է կատարվում հիմնականում միջազգային կառույցների ուղղորդմամբ ու միջոցներով: Դրա ապացույցներից մեկն այն է, որ շահագրգիռ կազմակերպությունների կամ անհատների տրամադրության տակ, որպես ուղեցույց, առկա է դեռևս 5 տարի առաջ Հայաստանի Հանրապետությունում իրականացված ուսումնասիրությունների արդյունքում մշակված մի ձեռնարկ, որը հրապարակվել է ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալության (USAID) կողմից ֆինանսավորվող և «Սեյվ դը չիլդրեն ինթերնեշնլ» հայաստանյան ներկայացուցչության կողմից իրագործվող՝ «Հաշմանդամություն ունեցող անձանց կենսամակարդակի բարելավում՝ զբաղվածության խթանման միջոցով» (LIFE) ծրագրի շրջանակներում[9]: Վերջին տարիներին անցկացվել են նաև մի քանի միջոցառումներ և համաժողովներ ձեռնարկատիրության այս ձևին առնչվող հիմնախնդիրների վերաբերյալ, սակայն դրանք, որպես կանոն, ավելի շատ ճանաչողական ու բանավիճային բնույթ են ունեցել՝ առանց արդյունավետ շարունակու-

[9] Սոցիալական ձեռնարկատիրություն. աշխարհը վերափոխող ձեռնարկությունների ստեղծման և զարգացման ձեռնարկ, Եր., 2016:

թյան: Ըստ էության, խնդրի ամբողջական խորքայնությունը դեռևս ըստ արժանվույն չի գնահատվում, սակայն, համաձայն տեղեկությունների[10], Եվրամիությունն իր սոցիալական և հումանիտար ներդրումներ իրականացնող լավագույն կազմակերպություններից մեկի՝ Վենչուրային հումանիզմի եվրոպական ընկերակցության միջոցով, Արևելյան գործընկերության երկրների համար՝ «Համագործակցություն հանուն սոցիալական ներազդեցության» անվանմամբ, նպատակային նոր ծրագիր է նախատեսում՝ 5 մլն եվրո ընդհանուր բյուջեով, որից 2 մլն-ը հատկացվելու է Հայաստանին: Ծրագրի մեկնարկը տրվելու է 2022 թվականին, և այն ունենալու է երկու թիրախային ուղղություններ.

1. սոցիալական ձեռնարկատիրության ոլորտում խոստումնալից և, իրագործելիության տեսանկյունից, իրատեսական գործարար նախագծերի աջակցություն և խորհրդատվության տրամադրում,
2. Հայաստանի ամբողջ տարածքում սոցիալական ձեռնարկատիրության խթանման նպատակով վենչուրային հիմնադրամի ստեղծում:

Ակներև է, որ ֆինանսական ներարկումն էապես կարող է փոխել իրերի դրվածքը, սակայն ՀՀ կառավարության 2021-2026 թվականների ծրագրի ռազմավարական դրույթներում նշված չէ տվյալ ուղղության զարգացման գործնական քայլերին միտված քաղաքականության մասին: Սա նշանակում է, որ «խաղի կանոնները» մեր իրականությունում դեռևս հստակեցված չեն նույնիսկ այդպիսի բարձր մակարդակում, և հետևապես՝ ոլորտը ներկայում տարերային կամ արտաքին ներազդեցությամբ զարգացման փուլում է, մինչդեռ ցանկալի կլիներ, որ գործնական կանոնները հստակեցվեին ու թելադրվեին ներսից, ինչի արդյունքում դրանք առավել մոտ կլինեին մեր իրականությանն ու հոգեկերտվածքին:

Հետպատերազմյան այս մեկ տարին, ցավոք, ցույց տվեց, որ երկիրը ոտքի հանելու, զարգացման և ցավոտ խնդիրները միահամուռ ուժերով լուծելու կամքը դեռևս իր տեղը զիջում է քաղաքական պաթետիկ հռետորաբանությանը, որը, բոլոր առումներով, տանում է դեպի փակուղի: Որքան էլ որ ցանկալի է, սակայն դեռևս չկա միակամություն, և հետևապես՝ բացակայում է նաև արագ ու նպատակային կերպով առաջ շարժվելու միասնական որոշման արձանագրումը: Այնինչ ժամանակը չի սպասում, ու եթե մենք, համաշխարհային տնտեսության զարգացման միտումներին զուգընթաց, ի զորու չլինենք ստեղծելու արագ ապաքինման ու զարգացման ազգային հայեցակարգ, ապա դա՝ թեկուզ «փափուկ ուժի» կիրառմամբ, ժամանակի ու տարածության մեջ մեզ կթելադրվի կամ կպարտադրվի այլոց կողմից: Ու այդժամ կկորցնենք յուրաքանչյուր նոր մոտեցում մեր երկրում մեր իսկ ազգային բաղադրիչներով «համեմելու» և ներդաշնակեցնելու, ինչպես նաև «խաղի կանոններ» մշակելու և դրանք իրականացնելու տրամաբանական և սուրբ իրավունքը:

Սուրբ տեղը, որպես կանոն, դատարկ չի մնում...

[10] https://finport.am/full_news.php?id=43826&lang=2

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Սոցիալական ձեռնարկատիրություն. աշխարհը վերափոխող ձեռնարկությունների ստեղծման և զարգացման ձեռնարկ, Եր., 2016:
2. Жохова В., Социальное предпринимательство: концепция, сущность и значение. Современная конкуренция, 2015. Том 9. №4 (52).
3. https://entreprenorskapsforum.se/wp-content/uploads/2019/03/
4. https://ec.europa.eu/growth/sectors/social-economy/enterprises_en
5. https://innovationlabs.harvard.edu/focus/social-enterprise/
6. https://entrepreneurship.duke.edu/news-item/the-meaning-of-social-entrepreneurship/
7. https://finport.am/full_news.php?id=43826&lang=2
8. https://armenia.savethechildren.net/sites/armenia.savethechildren.net/files/library/Arm%20final%20print.pdf

Амазасп ГАЛСТЯН
Исследователь исследовательского центра «Амберд», АГЭУ,
кандидат экономических наук

СОЦИАЛЬНАЯ ПОЛИТИКА

СОЦИАЛЬНОЕ ПРЕДПРИНИМАТЕЛЬСТВО: КТО ДОЛЖЕН ДИКТОВАТЬ ПРАВИЛА ИГРЫ?

Правительство любого государства не в состоянии самостоятельно решить все социальные проблемы страны за данный период, следовательно, определенная часть этих проблем неизбежно оказывается в бизнес сфере. Роль государства в этом случае более чем ясна: продвигать те формы предпринимательства, в которых социальная составляющая является не следствием, а причиной. Большинство успешных предпринимателей, как правило, начинали свою карьеру с ряда социальных проблем, решение которых на собственном опыте впоследствии стало мотивацией, помимо прибыльной деятельности, заняться хозяйственной деятельностью в пользу решения социальных проблем тех людей, которые уязвимы или подвержены риску, которые несмотря на то, что находятся на грани бедности, хотят работать и творить. Статья посвящена сущности, проблемам и тенденциям развития социальных предприятий. В частности, была предпринята попытка рассмотреть круг заинтересованных сторон в Армении, которые могут очертить и продиктовать «правила игры» для развития этого направления.

Ключевые слова: *социальное предпринимательство, социальный предприниматель, заинтересованные стороны, уязвимые группы, экология, инновации*

Hamazasp GALSTYAN
Researcher at "Amberd" Research Center, ASUE,
PhD in Economics

SOCIAL POLICY

SOCIAL ENTREPRENEURSHIP: WHO SHOULD DICTATE THE RULES OF THE GAME?

Any country's government is not able to solve all the social problems of the country during the given period on its own, consequently a certain part of these problems perforce appears in the sector of business managers. The role of the state in that case is more than clear: to promote those forms of entrepreneurship in which the social component is not the consequence but the cause. The majority of successful entrepreneurs, as a rule, began their careers with a number of social problems, the solution of which, through their own experience, later became a motivation, in addition to profitable activities, to undertake economic activities in favor of solving the problems of people who are vulnerable or exposed to risk, who are in groups that are in need or on the verge of poverty, but want to work and create. Using such people-centered principles of inclusiveness, initiatives are logically intertwined with environmental issues. The paper focuses on the nature, problems and development tendencies of social enterprises. In particular, an attempt was made to consider the circle of stakeholders in Armenia who can outline and, why not, dictate the "rules of the game" for the development of this direction.

Key words: *social entrepreneurship, social entrepreneur, stakeholders, vulnerable groups, ecology, innovation*